

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱԲ՝



Իրականացվում է ՄՖԿ/Համաշխարհային Բանկի խմբի կողմից, Միացյալ Թագավորության Կառավարության «Լավ Կառավարման Հիմնադրամի» աջակցությամբ

ՀՐԿՎԻՐՈՒՄ ԵՆՔ ԿԻՆ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Համաշխարհային բանկի խմբի (ՀԲԽ) անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիան (ՄՖԿ) հրավիրում է գործող և հեռանկարային կին ձեռներեցներին մասնակցելու **«Ձեռներեց կանանց հնարավորությունների ընդլայնումն ու առաջխաղացումը ոչ տեխնոլոգիական ոլորտներում տեխնոլոգիական լուծումների կիրառման միջոցով»** ծրագրին: Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել կին ձեռնարկատերերի տնտեսական արդյունքը՝ զարգացնելով նրանց գործարար կարողությունները և բիզնես ցանցերի հասանելիությունը:

Ծրագրում ընդգրկված մենթորների ուղղորդմամբ և մրցունակ կրթական ծրագրերի շնորհիվ կին մասնակիցները հնարավորություն կունենան բացահայտելու և կատարելագործելու իրենց ձեռնարկատիրական տաղանդը, հաղթահարելու բիզնես սկսելու և այն մեծացնելու վախերը, հաղորդակից լինելու բարդ պայմաններում ռիսկերի կառավարման գործիքներին, տիրապետելու գործնական բանակցությունների արվեստին: Ծրագրի արդյունքում ակնկալվում է՝ Հայաստանում ծրագրի մասնակից կին ձեռներեցների գաղափարների իրականացում, ընկերությունների հիմնում, մասնակից ընկերությունների ընդլայնում և հավելյալ ֆինանսական ու այլ ռեսուրսների ներգրավում, տեխնոլոգիական լուծումների կիրառում ոչ տեխնոլոգիական բիզնեսներում, կին ձեռներեցների միջև համագործակցության ձևավորում, սեփական ծրագրերի իրականացում անձնական նախաձեռնությամբ և, հատկապես, կորոնավիրուսով ու հետագայում նմանատիպ իրավիճակներով պայմանավորված մարտահրավերների դեպքում համարժեք ռազմավարական մոտեցումների մշակում:

Ծրագիրը բաղկացած է երկու հիմնական մասից՝ Ինտենսիվ Բուլքեմփի և Աբսելերացիոն ծրագրիր, որոնք կիրականացվեն Երևանում, Գյումրիում և Վանաձորում «Ինովացիոն լուծումների և տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամի, Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների աջակցությամբ:

Ինտենսիվ Բուլքեմփը նախատեսված է բոլոր այն կանանց համար, ովքեր ունեն բիզնես գաղափար, ձեռնարկության հիմնադիր կամ համահիմնադիր են: Բուլքեմփի ընթացքում մասնակիցները կուսումնասիրեն գաղափարների ձևավորման և փորձարկման, թիմերի կազմավորման և ծրագրերի ներկայացման հմտություններ՝ տեխնոլոգիական և բիզնես ոլորտի մասնագետների օգնությամբ: Կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակի պատճառով ծրագիրը կիրականացվի առցանց տարբերակով: Բուլքեմփի ավարտին գնահատող հանձնաժողովի կողմից կընտրվեն այն մասնակիցները, ովքեր պատրաստ կլինեն անցնել ծրագրի հաջորդ՝ Աբսելերացիայի փուլ:

Աբսելերացիոն ծրագիրը՝ ընտրական փուլը հաջողությամբ հաղթահարած դիմորդները կմասնակցեն բիզնեսի զարգացման, ընդլայնման, անձնական նախաձեռնողականության բարձրացման, բիզնեսի միջազգայնացման, ֆինանսավորման հնարավորությունների ներգրավման և բարդ իրավիճակներում

փոփոխությունների կառավարման 16-շաբաթյա դասընթացների՝ ոլորտի լավագույն մասնագետների մատուցմամբ:

Աբսելերացիոն ծրագրի ավարտին մասնակից թիմերն իրենց բիզնես նախագծերը կներկայացնեն գնահատող հանձնաժողովին: Լավագույն 5 թիմերը կստանան մեկական միլիոն ՀՀ դրամ դրամաշնորհ՝ նախագծերը սկսելու կամ զարգացնելու համար:

ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Ծրագիրն իրականացվում է «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի միջոցով՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) կողմից, Միացյալ Թագավորության կառավարության «Լավ Կառավարման հիմնադրամ»-ի հետ համագործակցությամբ իրականացվող «Կանանց տնտեսական հզորացումը Հայաստանում» ծրագրի շրջանակում: Ծրագիրը նպատակ ունի խթանել կանանց ներգրավվածությունը ձեռներեցության ոլորտում, օգնել գնահատել նորարարական և բարձր տեխնոլոգիական լուծումների դերը բիզնեսի զարգացման և ընդլայնման մեջ:

Կանայք հայ հասարակության շարժիչ ուժն են՝ օժտված յուրահատուկ ճկուն մտածելակերպով, անսահմանափակ կարողություններով և դեռևս լիովին չբացահայտված տաղանդով: Ծրագրի ընթացքում մենք կստեղծենք բոլոր պայմաններն ու հնարավորությունները, որ յուրաքանչյուր կնոջ մոտ արթնանա այն գիտակցությունը, որ ձեռնարկատիրական ու գործնական հաջողությունների հիմքում ոչ թե կին կամ տղամարդ լինելու գործոնն է, այլ աշխարհի զարգացումներին համահունչ գիտելիքների ու հմտությունների տիրապետումը:

ԻՆՉՊԵՍ ԴԻՄԵԼ

Բոլոր հետաքրքրված և ձեռնարկատիրական ձիրք ունեցող կանանց հրավիրում ենք դիմելու ծրագրի առաջին փուլին՝ Ինտենսիվ Բուժքեմփին մինչև սույն թվականի ԶՈՒԼԻՍԻ 20-ը, ժամը 23:59, հետևյալ հղմամբ՝ [«Ձեռներեց կանանց հնարավորությունների ընդլայնումն ու առաջխաղացումը ոչ տեխնոլոգիական ոլորտներում տեխնոլոգիական լուծումների կիրառման միջոցով» ծրագիր:](#)

Հարցերի դեպքում կարող եք գրել info@eif.am էլ. հասցեին կամ զանգահարել՝ +37441121480 հեռախոսահամարով:

